Օրեր հետո ուղարկեց շահի մոտ, բայց նրանք չկարողացան հաստատուն մնալ (այլևս այն չէին), չնայած ազատվեցին:

Սրանցից հետո բռնեց այրումեցի Տաշտամուր անունով մի մարդու, որովհետև սա առաջին խաների ժամանակ ապստամբվել էր, իսկ այս Զալը ինչ-որ հնարքով բռնեց նրան և ոտքից կախելով այնքան քարածեծեցին, մինչև մերձիմահ եղավ, ապա բանտ դրին, մեծ տուգանք առան ու արձակեցին: Սա գնաց Շիրակ իր տունը և (ստացած) բազում հարվածներից մեռավ:

Բայց այս խանի մասին չեմ կարող վատ խոսել, քանզի քրիստոնյաների ծնունդ էր և գութ էր տածում քրիստոնյաների նկատմամբ: Սրա առաջին տարում ահագին երկրաշարժ եղավ Արարատյան երկրում, որը առաջիկայում նկարագրելու եմ: Սա (Զալը) հրամայեց շինել բոլոր ավերված եկեղեցիները և բազմաթիվ եկեղեցիներ շինեցին տեղերում:

Այս օրերին ելավ (Զալը) գնաց Կոտայք գավառը ամառանոց: Քանաքեռ գյուղում ելավ գյուղի բլրի վրա, նայում էր ավերված տեղերին ու ափսոսում: Հետ դարձավ թիկունքի կողմը ու տեսավ եկեղեցին, հարցրեց, թե ի՞նչ է այս, ասացին, թե եկեղեցի է: Խանն ասաց՝ ինչո՞ւ չեք շինում դա: Գյուղացիները պատասխանում են, որովհետև կարողություն չունենք: Խանն ասում է՝ այնքան էլ կարողություն չունեք, որ փայտով ծածկեք, որ ձեր պառավները աղոթեն: Ահա ես ձեր հարկից 10 թուման նվիրում եմ, իսկ դուք շինեք եկեղեցիները: Նույն օրը սկսեցին հողային աշխատանքը, ծածկեցին ըստ խանի հրամանի: Այսպես նա սիրով էր քրիստոնյաների նկատմամբ, քանի դեռ Երևանում էր:

ԳԼՈՒԽ ԾԱ
ԵՐԵՎԱՆԻ ԱՀԱԳԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

1128 (1679) թվի հունիս ամսի 4-ին աստվածասաստ բարկությունը իջավ Արարատյան երկրի վրա, քանզի Աստված բարկությամբ նայեց իր արարածներին: Համբարձման երկրորդ շաբաթից հետո օրվա երրորդ ժամին հանկարծակի երկիրը գոռաց ինչպես ամպերը. գոռալուց հետո ահավոր թնդումով շարժվեց: Արարատ-

յան երկիրը առհասարակ դողում ու երերում էր ըստ խոսքի, թե ո՞վ է նայում երկրին և նրան դողացնում* և թե երկրի հիմքերը տատանվում էին: Այս երկրաշարժը եկավ Գառնու կողմերից, փլվեցին բոլոր շինվածքները, գեղեցկահարկ բնակարանները, վանքերը, եկեղեցիները: Հետևյալ եկեղեցիներն են ավերվել Աղջոց վանքը[154], Այրիվանքը[155], Հավուց թառը[156], Տրդատակերտը[157], Խոր Վիրապը[158], Ջրվեժը[159], Ձագավանքը[160], Երևանի երեք եկեղեցիները, Նորագավիթը[161], Նորագեղը[162], Ձորագեղը, Նորքը, Գամրեզը[163], Երևանի բերդը հիմքից խորտակվեց, մզկիթ ու մինարեներ: Շատ տեղերում աղբյուրներ բխեցին, բազմաթիվ աղբյուրներ խցվեցին: Փլվեցին քարափներ, լցվեցին առուներ, արգելվեցին ջրերի հոսանքներ: Քանդվեցին բազմաթիվ գյուղեր: Քանաքեռ գյուղում մի հավաբուն անգամ չմնաց: Զարմանալին այն էր, որ նույն Քանաքեռում մի տան մեջ փլվեցին չորս պատերը, իսկ տանիքը չորս սյուների վրա անշարժ մնաց, ինչպես օդից կախված: Երկրաշարժը հասավ մինչև գյուղաքաղաք Կարբի, որտեղ երեք մարդ մեռավ: Օհանավանքի Սուրբ ուխտում փլվեցին բոլոր գեղեցիկ ապարանքները, իսկ եկեղեցին խախտվեց, մենք հազիվ ազատվեցինք մահից: Իսկ նրանք, որ հողի տակ մնացին, ինչքան որ կարողացան հանել, հանեցին, իսկ ինչ չկարողացան, գերեզման եղան նրանց համար նրանց տները: Մեռելները ավելի շատ էին, քան ողջերը: Չնայած ամեն տեղ չկարողացան իմանալ մեռյալների (թիվը), բայց իմ հայրենի գյուղ Քանաքեռում հաշվեցին հազար երկու հարյուր քսանութ: Ոչ շուն մնաց, ոչ կատու, ոչ հավ:

Երկրաշարժը տևեց մինչև հոկտեմբեր ամիսը: Ամեն օր երկիրը գոռում էր, օր կար երեք, օր կար չորս, օր կար հինգ անգամ, ապա սկսվում էր երկրաշարժը: Սակայն վնասը առաջին օրը եղավ: Ովքեր կենդանի մնացին, կարպետե վրաններով բնակվում էին այգիներում, պարտեզներում, անշեն տեղերում:

Երկրաշարժի առաջին օրը դեսպաններ եկան Կարինից և տեսան երկրաշարժը: Իսկ խանը նույն օրը դեսպաններ ուղարկեց շահի մոտ և տեղեկացրեց երկրաշարժի ավերումը: Օսմանցի դեսպաններին չթողեց գնալ, մինչև որ եկան շահի պատգամները: Տասնհինգ օր հետո եկավ արագագնաց սուրհանդակը և բերդը, և

*Սաղմ. ՃԳ, 22: